

Գործարար շրջանառության սովորույթ՝

կապված վարկային գծի հետ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները: Գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով Հաշտարարի գրասենյակը գրություն է ուղարկել ՀՀում գործող բոլոր բանկերին և խնդրել նրանց կարծիքը ստորև նշված հարցի վերաբերյալ: Դիցուք՝ քաղաքացին Բանկի հետ տարբեր ժամանակահատվածներում կնքել է բանկային/քարտային հաշվի պայմանագիր, հիփոթեքի պայմանագիր, ինչպես նաև նրան տրամադրվել է վարկային գիծ: Հաճախորդը որոշ ժամանակ պատշաճ կատարել է իր պարտավորությունները, սակայն հետագայում կետանցել է վարկային գծի հերթական մարումը՝ մինևույն ժամանակ հիփոթեքի պայմանագրով նշված պայմաններով և չափով պարտաճանաչ կերպով մարելով նշված պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները: Բանկը, հաճախորդից ստանալով հիփոթեքի մարմանն ուղղված գումարները, դրանք պարբերաբար ուղղել է վարկային գծով կետանցված պարտավորությունների մարմանը՝ դրանով իսկ հիփոթեքի վարկը դարձնելով ժամկետանց: Ընդ որում, Բանկը ոչ մի անգամ այդ մասին տեղյակ չի պահել հաճախորդին: Ինչևէ, որոշ ժամանակ անց հաճախորդը, ցանկանալով վաճառել գրավ դրված գույքը, Բանկից տեղեկանք է պահանջել հիփոթեքային վարկի մնացորդի վերաբերյալ, ստացել այն և ըստ տեղեկանքում նշված գումարի չափի կատարել վճարում՝ վճարման հանձնարարականի մեջ որպես վճարման նպատակ նշելով «հիփոթեքային վարկի մարում», ինչպես նաև լրացուցիչ դիմում է գրել՝ խնդրելով վճարվող գումարով մարել հիփոթեքային վարկը: Բանկը, ստանալով գումարը, այն կրկին ուղղել է հաճախորդի վարկային գծի մարմանը: Արդյունքում՝ հաճախորդի հիփոթեքային վարկը մնացել է չմարված, և վերջինս չի կարողացել կատարել գրավ դրված գույքի նախնական առուվաճառքի պայմանագրով գնորդի առջև ստանձնած իր պարտավորությունները՝ կրելով լրացուցիչ վնասներ:

Տվյալ պարագայում հարց է առաջանում. արդյո՞ք Բանկն իրավունք ունի չկատարել հաճախորդի կարգադրությունը. մասնավորապես՝ Բանկը ելնում է այն

տրամաբանությունից, որ հաճախորդի հետ կնքած բանկային հաշվի պայմանագրով սահմանվել է, որ Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ հաճախորդի բոլոր տեսակի հաշիվներում առկա դրամական միջոցներն անակցեպտ գանձել՝ ի կատարումն Բանկի հանդեպ ունեցած հաճախորդի պարտավորությունների՝ անկախ դրանց ծագման հիմքերից: Բանկն իր դիրքորոշումը հիմնավորում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածի 2րդ մասով: Հաճախորդը գտնում է, որ տվյալ նորմը չի վերաբերում ներկայացված դեպքին. մասնավորապես՝ այն սահմանում է կանոն, որը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. առկա չէ հաճախորդի կոնկրետ կարգադրություն,
2. պայմանագրում նշված է Բանկի՝ հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու իրավունքը,
3. հաշվում առկա են դրամական միջոցներ:

Տվյալ պարագայում ստացվում է, որ առկա է հաճախորդի կարգադրություն՝ մարել հենց հիփոթեքային վարկը, և հաճախորդի հաշվում ըստ էության չկան դրամական միջոցներ. դրանք՝ ըստ հաճախորդի փաստացի առաջանում են արհեստականորեն՝ այն դեպքում, երբ հաճախորդը գումար է մուտքագրում Բանկի դրամարկղ՝ վարկը մարելու նպատակով, սակայն Բանկն այն մարելու փոխարեն գումարն ուղղում է հաճախորդի բանկային հաշվին և գանձում այն այլ նպատակով: Ըստ հաճախորդի՝ հաճախորդի կարգադրությունը կատարելու Բանկի պարտավորությունն իմպերատիվ է և այն չի կարող փոփոխվել պայմանագրով: Նշված խնդիրը տարակարծությունների տեղիք է տվել նաև իրավաբանների շրջանում, ուստի համակարգում առկա գործարար շրջանառության սովորույթը ճշտելու համար Հաշտարարը խնդրել է բոլոր բանկերին ներկայացնել սովորույթը և մասնագիտական կարծիք ներկայացվածի վերաբերյալ:

Բանկերից ստացված պատասխանները չեն ձևավորել գործարար շրջանառության սովորույթ, քանի որ գրությանը պատասխանել են թվով քիչ բանկեր, իսկ պատասխաններում էլ բանկերը դրսևորել են տարբեր մոտեցումներ: Հաշտարարը, վերլուծելով օրենսդրության պահանջները, ձևավորել է դիրքորոշում նշված խնդրի վերաբերյալ, մասնավորապես. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 912 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի (հաշվի տիրոջ) բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ

տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ: Օրենսգրքի 918 հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ բանկային հաշվի պայմանագրին համապատասխան, բանկը վճարում է հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը (հաշվի վարկավորում), նա նման վճար կատարելու օրվանից համարվում է հաճախորդին համապատասխան գու մարով վարկ տրամադրած: Հաշվի վարկավորման հետ կապված՝ կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են փոխառության (46 գլուխ) ու վարկի (47 գլուխ) կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշվի պայմանագրով: Օրենսգրքի 922 հոդվածով սահմանվում է, որ բանկը հաշվից դրամական միջոցներ դուրս է գրում հաճախորդի կարգադրության հիման վրա: Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի վճռով, ինչպես նաև օրենքով սահմանված կամ բանկի և հաճախորդի միջև պայմանագրով նախատեսված դեպքերում: Օրենսգրքի 924 հոդվածի համաձայն՝ հաճախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները նրա հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք բանկի կողմից հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին հաճախորդի ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում բանկը պարտավոր է այդ գումարից տոկոսներ վճարել նույն օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված կարգով և չափով: Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ Բանկը կարող է բանկային հաշվի պայմանագրով սահմանել սահմանափակումներ հաճախորդի դրամական միջոցները հաճախորդի հայեցողությամբ տնօրինելու իրավունքների նկատմամբ, սակայն այլ սահմանափակումներ, քան արդեն նախատեսված են այդ պայմանագրով, Բանկն իրավունք չունի կատարել: Ինչպես նշված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածում՝ Բանկին թույլատրվում է հաշվում եղած դրամական միջոցները դուրս գրել առանց հաճախորդի կարգադրության, եթե հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրով առկա է նման իրավունք: Ընդ որում՝ Բանկն իրավունք ունի հաճախորդի հաշվից առանց նրա կարգադրության անակցեպտ գանձել գումարներ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- առկա չէ հաճախորդի կոնկրետ կարգադրություն,
- պայմանագրում նշված է բանկի՝ հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու իրավունքը
- հաշվում առկա են դրամական միջոցներ: Հաշվում դրամական միջոցների առկայությունը ենթադրում է այնպիսի միջոցների առկայություն, որոնք հաշվետերը կամ նրա կողմից լիազորված անձը կարող է հաշվից դուրս գրել կամ այլ կերպ տնօրինել առանց լրացուցիչ սահմանափակումների: